

01/10.4/2411-09

2009-04-16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ
ԱԲԲԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Վիկտոր Դավաթյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

1. «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝

1) 1-ին հոդվածում անհրաժեշտ է ճիշտ նշել «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) անվանումը և համարը՝ հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները.

2) 1-ին հոդվածով նախատեսված՝ փոփոխման ենթակա «որսի կենդանիների ցանկը հաստատում և դրանց որսի համար տարեկան օգտագործման թույլատրելի չափաքանակները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը» դրույթն անընդունելի է, քանի որ այն հակասում է օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին նախա-
AJV-15-9-2009-04-09

դասությանը, **2-րդ** հոդվածի «որսի կենդանիների ցանկ» հասկացության սահմանմանը և **8-րդ** հոդվածի **4-րդ** կետին:

Բացի նշված հակասություններից՝ որսի կենդանիների ցանկի հաստատումն ու դրանց տարեկան թույլատրելի չափաքանակների սահմանումը գուտ մասնագիտական մոտեցում պահանջող գործընթաց է, որը ներառում է օրենքի **8-րդ** հոդվածով և «Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ամրագրված լիազորված մարմնի իրավասությունների սահմաններում իրականացվող գործառույթը, այդ թվում՝ կենդանիների հաշվառման, մոնիթորինգի անցկացման, կադաստրի վարման և դրանց արդյունքում հավաքագրված տվյալների հիման վրա որսի կենդանիների տեսակների ու դրանց որսի չափաքանակների որոշումը:

Նշված իրավասությունը Հայաստանի Հանրապետության կառավարությանը վերապահելու դեպքում անհրաժեշտ կլինի օրենքի բազմաթիվ հոդվածներում կատարել ծավալուն փոփոխություններ՝ օրենքի ներքին տրամաբանական կապն ապահովելու նպատակով:

Միաժամանակ, պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի **2009** թվականի հունվարի **15-ի N 9-Ն** հրամանով հաստատվել և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում պետական գրանցում է ստացել «Որսի կանոնները հաստատելու մասին» նորմատիվ իրավական ակտը, որում ներառված են որսի օբյեկտ համարվող կենդանիների ցանկը և որսի ժամկետների ու չափաքանակների սահմանման պայմանները:

Այս հիմնավորմամբ անհրաժեշտ է հանել նաև նախագծի **2-րդ** և **3-րդ** հոդվածները.

3) նախագծի **4-րդ** հոդվածի անհրաժեշտությունը չկա, քանի որ օրենքի **8-րդ** հոդվածի **3-րդ** կետով հստակ սահմանված է, որ լիազոր մարմինը վերահսկողություն է իրականացնում որսի կենդանիների և որսահանդակների պահպանության, պաշտպանության և կայուն օգտագործման, որսի և որսորդական տնտեսության վարման նկատմամբ,

ինչը ներառում է նաև «որսագողության դեմ կազմակերպվող միջոցառումների իրականացումը».

4) նախագծի 5-րդ և 9-րդ հոդվածները ևս անընդունելի են, քանի որ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն «որսի թույլտվությունը, դա որսահանդակներում որս իրականացնելու համար սույն օրենքով սահմանված կարգով տրված միանվագ կամ սեզոնային այցելության թույլտվություն է, որտեղ նշվում են որսի վայրը, ձևը, այցելության ժամկետները, որսատեսակները և յուրաքանչյուր որսատեսակի քանակը», ուստի, նույն իրավունքը վերապահող այլ փաստաթղթի՝ «որսորդական ուղեգրի» անհրաժեշտությունը չկա.

5) նախագծի 6-րդ հոդվածում՝

ա. «ենթակետեր» բառը փոխարինել «կետեր» բառով,

բ. հանել՝

4-րդ կետը, քանի որ որսի օբյեկտ չհամարվող կենդանիների ցանկն սպառիչ չէ և պարբերաբար փոփոխվում է,

7-րդ կետը, քանի որ գնված որսի արգասիքի փաստաթղթերի ձևակերպումը որսի կանոններով կարգավորվող իրավահարաբերությունների շրջանակներից դուրս է,

9-րդ կետը, քանի որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի համաձայն ֆիզիկական ու իրավաբանական անձանց պարտականությունները կարող են սահմանվել միայն օրենքով,

գ. պարզ չէ, թե ով է հաստատում 5-րդ, 6-րդ և 8-րդ կետերով նախատեսված ցանկերը.

6) նախագծի 8-րդ հոդվածից անհրաժեշտ է հանել՝

ա. «վերնագրով և» բառերը,

բ. 8-րդ և 12-րդ կետերը, քանի որ դրանցով սահմանված եղանակները որսի ձև կամ միջոց չեն: Հողվածի հետ կապված՝ հարկ է նկատի ունենալ այն, որ հնարավոր չէ օրենքով նախատեսել որսի արգելվող ձևերի և միջոցների սպառիչ ցանկը.

7) հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները՝ անհրաժեշտ է նախագծի 10-րդ հոդվածում «հրապարակմանը» բառը փոխարինել «հրապարակման օրվան» բառերով, իսկ «օրվանից» բառը՝ «օրը» բառով:

2. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում՝

1) անհրաժեշտ է 1-ին հոդվածը համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին, որոնց համաձայն «Օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս՝ դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են «Հայաստանի Հանրապետության» բառերը, դրա ընդունման օրը և օրենսգրքի վերնագիրը».

2) անհրաժեշտ է համարակալումը համաձայնեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածով սահմանված իրավական ակտերի համարակալմանը ներկայացվող պահանջներին, մասնավորապես, անհրաժեշտ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ օրենքներում հոդվածները բաժանվում են համարակալված մասերի, մասերը՝ կետերի, իսկ կետերը համարակալվում են արաբական թվանշաններով և ոչ թե հայերեն տառերով.

3) նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները՝ անհրաժեշտ է 2-րդ հոդվածում «հրապարակմանը» բառը փոխարինել «հրապարակման օրվան» բառերով, իսկ «օրվանից» բառը՝ «օրը» բառով:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված նախագծերը լրամշակման կարիք ունեն և այս տեսքով ընդունելի չեն:

Միաժամանակ հայտնում ենք, որ, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում նախագծերի փաթեթը քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարար Արամ Հարությունյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ

Պ-558-09.03.2009-ԳԲ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«Որսի եւ որսորդական տնտեսության վարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու
մասին**

Հոդված 1. «Որսի եւ որսորդական տնտեսության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի ապրիլի 9-ի թիվ 110507 օրենքի /այսուհետ՝ օրենք/ 5-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

«2. որսի կենդանիների ցանկը հաստատում էլ դրանց որսի համար նախատեսվող տարեկան օգտագործման թույլատրելի չափաքանակները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ`

«2/ լիազորված պետական մարմինը /այսուհետ` լիազորված մարմին/»:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածի 9-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 10-րդ ենթակետով`

«10/ որսի կենդանիների ցանկի հաստատումը, դրանց որսի համար նախատեսվող տարեկան օգտագործման թույլատրելի չափաքանակների եւ որսի ժամկետների սահմանումը»:

Հոդված 4. Օրենքի 8-րդ հոդվածի 8-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ`

«8/ որսագողության դեմ կազմակերպվող միջոցառումների իրականացումը»:

Հոդված 5. Օրենքի 19-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ «4/» ենթակետով`

«4/ որսորդական ուղեգիրը»:

Հոդված 6. Օրենքի 20-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ «4», «5», «6», «7», «8» եւ «9» ենթակետերով`

«4/ որսի օբյեկտ չհամարվող կենդանիների ցանկը.

5/ որսի արգելված միջոցները եւ գործիքները.

6/ որսի արգելված տարածքների ցանկը.

7/ գնված որսի արգասիքի փաստաթղթերի ձևակերպման կարգը,

8/ օգտագործման հանձնաված որսորդական տնտեսությունների եւ որսահանդակների ցանկը,

9/ որսորդների եւ որսի օգտատերերի պարտականությունները»:

Հոդված 7. Օրենքի 21-րդ հոդվածի վերջին տողում «թաքստոցները» բառից հետո լրացնել «եւ թիվ 5-ից ոչ խոշոր թակարդները, որոնց օգտագործման կարգը սահմանում է լիազորված մարմինը» բառերով:

Հոդված 8. Օրենքը լրացնել հետևյալ վերնագրով եւ բովանդակությամբ 21.1 հոդվածով`

«Հոդված 21.1. Որսի արգելված ձևերը եւ միջոցները

Հայաստանի Հանրապետության տարածքում արգելվում է`

- 1/ որսի համար օրենքով չնախատեսված զենքի, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով չգրանցված որսորդական զենքի կիրառումը,
- 2/ ռազմական ակոսավոր զենքի օգտագործումը,
- 3/ ինքնանետերի, աղեղների, ինքնաձիգ հրացանների, օդամղիչ զենքի, ծուղակների /փոսերի/ եւ թիվ 5-ից խոշոր թակարդների օգտագործումը,
- 4/ քիմիական եւ պայթուցիկ նյութերի կիրառումով վայրի կենդանիների որսը՝ բացառությամբ հոտավետ խայծերի,
- 5/ լուսարձակների կամ լուսային այլ հզոր աղբյուրների կիրառումով որսը,
- 6/ տրանսպորտային կամ մեխանիկական միջոցների /այդ թվում ուղղաթիռով կամ ինքնաթիռով/ կիրառումով որսը,
- 7/ ձվերի եւ ձագերի հավաքը, գազանների եւ թռչունների բների ու որջերի քանդելը,
- 8/ կենդանիների ապրելավայրերի եւ հավաքատեղերի վնասումը եւ ոչնչացումը,
- 9/ բնական աղետներից, այդ թվում եւ սովից փրկվող կենդանիների որսը
- 10/ էլեկտրոնային ձայն վերարտադրող սարքերի եւ ձայնարձակիչների կիրառումը,
- 11/ ցանցերի, օղակների կիրառումը,
- 12/ առանց թույլտվության վայրի գազաններին եւ թռչուններին անազատ պայմաններում պահելը,
- 13/ կենդանիներին ծխի միջոցով որսալը,
- 14/ էլեկտրական հոսանքի կիրառումով որսը»:

Հոդված 9. Օրենքը լրացնել հետեւյալ վերնագրով եւ բովանդակությամբ **28.1** հոդվածով՝

«**Հոդված 28.1.** Որսորդական ուղեգիրը

Որսորդական ուղեգիրը տրվում է որսորդին լիազորված մարմնի կամ օգտատիրոջ կողմից եւ իրավունք է տալիս որսալ որոշակի տեսակների որսի կենդանիներ՝ համաձայն ուղեգրում նշված այցելության ժամկետների, որսահանդակների, որսատեսակների եւ յուրաքանչյուր որսատեսակի քանակի»:

Հոդված 10. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՈՐՄԻ ԵՎ ՈՐՍՈՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

**ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ » ԵՎ «ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ»
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԻՆԱԳԾԻ ՓԱԹԵԹԻ
ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

Սույն օրենքի ընդունումը պայմանավորված է որսագողության դեմ ուղղված պայքարն առավելագույնս արդյունավետ իրականացնելու անհրաժեշտությամբ:



Նախագիծ
Պ-558՝-09.03.2009-ԳԲ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության 2003թ. ապրիլի 18-ի ՀՕ-528-Ն քրեական օրենսգրքի /այսուհետ՝ օրենսգիրք/ 294-րդ հոդվածում՝

ա/ 1-ին կետի 4/ -րդ ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«4/ կատարվել է բնության հատուկ պահպանվող տարածքներում՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկապատիկից վեցհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ չորսից վեց ամիս ժամկետով:»:

բ/ 2-րդ կետի 2/-րդ ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«2/ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝ պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի

Ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործնեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը չորս տարի ժամկետով»:

Հոդված 2. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տաներորդ օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ՈՐՄԻ ԵՎ ՈՐՍՈՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ » ԵՎ «ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ»
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԻՆԱԳԾԻ ՓԱԹԵԹԻ
ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

Սույն օրենքի ընդունումը պայմանավորված է որսագողության դեմ ուղղված պայքարն առավելագույնս արդյունավետ իրականացնելու անհրաժեշտությամբ:

